ՀՏԴ 929:891.981 Սևակ

Doi:10.54503/0135-0536-2024.3-295

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ*

Նոյեմբերի 5–7-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ տեղի ունեցավ Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով: Համակազմակերպիչներն էին ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը (ԳԻ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հայ բանասիրության ֆակուլտետը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) բանասիրական ֆակուլտետը, Պարույր Սևակի տուն-թանգարանը:

Նոյեմբերի 5-ի լիագումար նիստում գիտաժողովի մեկնարկն ազդարարեց նիստի նախագահ, ԳԻ տնօրեն, բ. գ. թ. Հերիքնազ Որսկանյանը: Մեջբերելով Սևակի խոսքերը՝ «Ազգային գրականության արժեքը կարող է ճշտվել-ճշմարտվել միայն համաշխարհային գրական-մշակութաբանական համատեքստում», բանախոսը նկատեց. «Սևակի պոեզիան էլ՝ բանական-իմացաբանական զգայնությամբ, հարուստ բառապաշարով, բազմաշերտ ասելիքով, փիլիսոփայական ընդհանրացումներով ու բանաստեղծական ուժով, գնահատելի է հենց այդ չափանիշով»:

Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները համակարգող հանձնաժողովի նախագահ, ՀԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը իր խոսքում շնորհակալություն հայտնեց Գիտությունների ազգային ակադեմիային և բուհերին՝ նախարարության առաջարկն ընդունելու, երկխոսության միջավայր ձևավորելու համար:

ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը ողջույնի խոսքում մասնավորապես շեշտեց Սևակի՝ ոչ միայն խոշոր բանաստեղծ, այլև գիտական-գրականագետ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող, Գրողների միության քարտուղար, գրական կյանքի ակտիվ կազմակերպիչ լինելու իրողությունները:

Լիագումար նիստում ողջույնի խոսքով հանդես եկան նաև ԵՊՀ ռեկտոր, պ. գ. դ., դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր, հ. գ. դ., պրոֆ. Սրբուհի Գևորգյանը, ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, Պարույր Սևակի տուն-թանգարանի տնօրեն, բ. գ. թ. Սևակ Ղազարյանը:

Այնուհետ զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթո-

---

* *Ներկայացվել է 25. XI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

դիկայի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ալլիտա Դոլուխանյանը *(«Պարույր Սևակը նորարար»), ԳԻ նորագույն շրջանի հայ գրականության բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ.* Սուրեն Աբրահամյանը *(«Պարույր Սևակի պոեզիայի գրապատմական նշանակությունը»), ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ.* Սուրեն Դանիելյանը *(««Անբանաստեղծական բանաստեղծության» սկզբունքների շուրջ»), բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. դ., պրոֆ.* Աշոտ Գալստյանը *(«Պարույր Սևակ ընորդը հուշագրության մեջ»), ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ., պրոֆ.* Դավիթ Գասպարյանը *(«Պարույր Սևակը 1960-ականների համամիութենական գրական-գեղարվեստական տեղաշարժերի տեսադաշտում»), Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվ. դ., պրոֆ.* Աննա Ասատրյանը *(«Պարույր Սևակի պոեզիան հայ երաժշտության մեջ. Էդգար Հովհաննիսյանի «Էրեբունի-Երևան» և «Սարդարապատ» խմբերգերը»), Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատար, արվ. թ., դոցենտ* Ծովինար Մովսիսյանը *[«Մի համագործակցության պատմություն (Էդգար Հովհաննիսյան, Պարույր Սևակ, Մինաս Ավետիսյան)»]:*

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում նույն օրվա երկրորդ նիստում (նիստի նախագահ՝ բ. գ. դ., պրոֆ. Սուրեն Դանիելյան) զեկուցումներով հանդես եկան ԳԻ ավագ գիտաշխատող, բ. գ. դ. Մարգարիտա Խաչատրյանը *(«Տորոնտոյի «Արձագանգ» ամսաթերթը Պարույր Սևակի մասին»), ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Քնարիկ Աբրահամյանը *(«Արևմտահայ հեղինակները Պարույր Սևակի մեկնաբանություններում»), հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Լուսինե Գալստյանը *(«Հեթանոսության և քրիստոնեության հակադրությունը Պարույր Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն ...» պոեմում»), Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի խորհրդական, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրենի խորհրդական, թարգմանիչ* Միհրան Մինասյանը *(«Պարույր Սևակի պոեզիան արաբերեն»), Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի դասախոս, արվ. թ., դոցենտ* Նարինե Ավետիսյանը *(«Պարույր Սևակի պոեզիան հայ կոմպոզիտորական արվեստում»), Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դասախոս, բ. գ. թ.* Նարինե Կարախանյանը *(«Պարույր Սևակի «Ամանեջ» վեպի գրական-գեղարվեստական առանձնահատկությունները»), ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի մագիստրոս* Արևիկ Գոմցյանը *(«Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» ժողովածուն»):*

Նոյեմբերի 5-ի 2-րդ բաժանմունքի նիստում (նիստի նախագահ՝ բ. գ. դ. պրոֆ. Ալլիտա Դոլուխանյան) զեկուցումներով հանդես եկան ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Արմեն Շ. Սարգսյանը *(«Պարույր Սևակը և Աստվածաշունչը. Երգ երգոց»), ՀՊՄՀ-ի արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Մելինե Գիլավյանը *(«Պարույր Սևակը մանկագիր»), հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասա-*

խոս, բ. գ. թ., դոցենտ Արմենուհի Մուրադյանը *(«Պարույր Սևակը Էդուարդաս Մեժելայտիսի թարգմանիչ»), հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, բ. գ. թ.* Աննա Սարգսյանը *(«Պարույր Սևակի «Դիմակներ» շարքի թեմատիկ-գաղափարական առանձնահատկությունները»), Երևան քաղաքի պատմության թանգարանի նորագույն պատմության բաժնի վարիչ* Մերի Ավետիսյանը *(«Պարույր Սևակի «Էրեբունի-Երևան» բանաստեղծությունը՝ մշակութային հաղորդակցության տեքստ»), ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության մագիստրոս* Մարիամ Հերդնյանը *(«Հոգեբանական տրավմայի դրսևորումները Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմում»), ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի մագիստրանտ* Տաթև Թամրազյանը *(«Լինել արվեստագետ՝ ըստ Պ. Սևակի»):*

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ գիտաժողովի նոյեմբերի 6-ի նիստը (նիստի նախագահ՝ ֆակուլտետի դեկան, բ. գ. թ., դոցենտ Արշալույս Գալստյան): Զեկուցումներով հանդես եկան ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պատվավոր վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վազգեն Գաբրիելյանը *(«Պարույր Սևակի Դանիել Վարուժանը»), նույն ամբիոնի դասախոս, բ. գ. դ., պրոֆ.* Ժենյա Քալանթարյանը *(«Հովհաննես Թումանյանի դիմանկարն ըստ Սևակի»), նույն ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ* Սեյրան Գրիգորյանը *[«Կոմիտաս վարդապետը կյանքում և Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմում (նախատիպը և կերպարը)»], ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Աստղիկ Բեքմեզյանը *[«Բանաստեղծական շարքի սևակյան իմաստավորումը («Եղիցի լույս»)»], ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Արմենուհի Արզումանյանը *(«Պարույր Սևակի «Ամանեջ» վեպը՝ որպես նարատիվ կառույց»), ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս* Արսեն Վարդանյանը *(«Պարույր Սևակի կենսագրության ուսուցումը դպրոցում փոխգործուն մեթոդներով»):*

ԳԻ-ում տեղի ունեցավ գիտաժողովի նոյեմբերի 7-ի առաջին նիստը (նիստի նախագահ՝ բ. գ. դ. Պետրոս Դեմիրճյան): Զեկուցումներով հանդես եկան ԳԻ հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Պետրոս Դեմիրճյանը *(«Երազի և իրականության կապը Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուում»), ՌԳԱ Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ.* Բուրատան Զուլումյանը *(«Պարույր Սևակի պատմափիլիսոփայությունը»), Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի գիտական գծով տեղակալ* Հայկանուշ Ղազարյանը *(«Պարույր Սևակի ստեղծագործության մատենագիտության շուրջ»), ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, բ. գ. թ., դոցենտ* Նափրա Խաչատրյանը *(«Եվ կրկին «Եղիցի լույս»»), ԳԻ նորագույն շրջանի հայ գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Լիլիթ Սեյրանյանը *(«Հին աշխարհակարգից նորի անցման նշանները Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուի բանաստեղծություններում»), ԳԻ ավագ գիտաշխատող, բ. գ. թ.* Արքմենիկ Նիկողոսյանը *(«Պարույր Սևակը և*

հայ միջնադարյան գրականությունը»), Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Կարինե Առաքելյանը *(«Պարույր Սևակի լեզվական արվեստն ուսումնասիրողն ու բացահայտողը. Արտաշես Պապոյան»), ՃՇՀԱՀ դասախոս, բ. գ. թ.* Ռուզաննա Սահակյանը *(«Պարույր Սևակի հրապարակախոսության արդիականությունը»), ԳԻ ասպիրանտ* Ռոզա Մելքումյանը *[«Քաղաքը և գյուղը՝ իբրև գրական տեքստեր. տոպոս և ինքնություն («Ամանեջ» և «Այրվող այգեստաններ» վեպերի զուգահեռով)»]:*

Նույն օրվա երկրորդ նիստում (նիստի նախագահ՝ Լիլիթ Սեյրանյան) զեկուցումներով հանդես եկան ԳԻ գիտաշխատող, բ. գ. դ. Ռուզան Արիստակեսյանը *(«Բազմաձայնությունը Պ. Սևակի գեղարվեստական մտածողության համակարգում»), ՌԴ-ում ՀՀ դեսպանության մշակույթի կենտրոնում գործող հայագիտական ամբիոնի վարիչ, բ. գ. թ.* Ալիդա Մարանջյանը *(«Միջնադարյան բանարվեստի խորհրդանշանները Պարույր Սևակի քնարերգության մեջ»), ԳԻ արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ* Քրիստինե Բեջանյանը *(«Պարույր Սևակի ստեղծագործությունների անգլերեն թարգմանությունները»), ԳԻ գիտաշխատող, բ. գ. թ.* Թադևոս Խաչատրյանը *(«Արվեստը և Պարույր Սևակի «Արվեստ» բանաստեղծությունը»), ԳԻ գիտաշխատող, ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Վահե Արսենյանը *(«Ուոլթ Ուիթմենի ստեղծագործական արվեստի արձագանքները Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» բանաստեղծական ժողովածուում»), ԳԻ ավագ գիտաշխատող, բ. գ. թ.* Լուսինե Վարդանյանը *(«Միջտեքստայնությունը Պարույր Սևակի «Նահանջ երգով» պոեմում»), թարգմանիչ* Կարեն Միրզոյանը *(«Պարույր Սևակի պոեզիան իտալերեն»), ԳԻ կրտսեր գիտաշխատող, բ. գ. թ.* Անի Ղազարյանը *(«Լույսի և բարության սերմնացանը»), ԳԻ հայցորդ* Էմմա Գրիգորյանը *(«Պարույր Սևակը Վահագն Դավթյանի գնահատությամբ»):*

Գիտաժողովը հնարավորություն ընձեռեց ևս մեկ անգամ արժևորելու և վերարժևորելու հայ նորագույն գրականության մեծերից մեկի կերպարն ու գործը, լսելու նրա պատգամներն ու խորհուրդները:

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ